ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱԳԱԾ

ՀԱՄԱՅՆՔԻ

2017 - 2021թթ.

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող Արագած համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հ. Հովհաննիսյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 53-Ն որոշմամբ

Արագած 2016

Բովանդակություն

1. Ներածություն……
2. ՀՀԶԾ կառուցվածքը……..
2.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն……
2.1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն……..
2.1.2 Համայնքի սոցիալ –տնտեսական իրավիճակ …… …
2.1.3 Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ……
2.1.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում……
2.1.5 Համայնքի սոցիալ –տնտեսական խոչընդոտող գործոններ……
2.1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն……
2.2 Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում……
2.2.1 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում ….
2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում ……
2.2.3 ՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն ……
2.3 ՀՀԶԾ ֆինանսավորում
2.4 ՀՀԶԾ մոնիթորինգ
3. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում
4. ՀՀԶԾ իրականացում
5. ՀՀԶԾ գնահատում
6. ՀՀԶԾ կազմման գործընթաց
7. Ծրագրերի անձնագրեր

1.Ներածություն

ՀՀԶԾ-ն սահմանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը և նպատակաուղղված է համայնքի կայուն զարգացմանը: Դրանում ներառվում են համայնքի խնդիրները և այդ խնդիրների լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները:

2. ՀՀԶԾ կառուցվածք

ՀՀԶԾ-ն բաղկացած է 4 գլխից

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
3. ՀՀԶԾ ֆինանսավորում
4. ՀՀԶԾ մոնիթորինգ

Համայնքի իրավիճակի նկարագրություն

Արագած համայնքում այսօր գործում են.

1. Երկու միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 365աշակերտներ և աշխատում են 68 ուսուցիչներ և տեխնիկական աշխատողներ:

2. 2005թ. սեպտեմբերից համայնքում բացվել է արվեստի դպրոց հետևյալ բաժիններով.
   - դաշնամուրի բաժին,
   - ստեղնաշարային գործիքների բաժին,
   - պարարվեստի բաժին,

- Ժող երգի բաժին
- Դհոլի բաժին
- Գոբելենի բաժին
- Նկարչության բաժին
- Դուդուկի բաժին

Արվեստի դպրոցում սովորում են 130 երեխաներ:

3. Արագած համայնքում 2006թ բացվել է մանկապարտեզ՝ երկու խմբերով 40 սանի համար, իսկ 2010-թ-ից հետո մանկապարետզը գործում է չորս խմբերով մինչև 110 սանների համար, և ունի 15 հոգի մանկավարժական և սպասարկող անձնակազմ:
4. Արագածի մշակույթի տուն –Կառուցվել է 1984 թ: Կապիտալ վերանորոգվել է 2008-2010թթ-ին: Մշակույթի տանը տեղակայված է գրադարանը 13000 կտոր գրքային ֆոնդով: Այն ունի 400 տեղանոց դահլիճ և մի շարք աշխատասեյնակներ:

5. «Արագածի առողջության կենտրոն» ՓԲԸ, որն ունի գինեկոլոգիական, մանկական, թերապևտիկ, ծննդաբերական և ստոմատոլոգիական բաժանմունքներ: Հիվանդանոցը հագեցած է անհրաժեշտ բուժ-սարքավորումներով, ունի շտապ օգնության ավտոմեքենա: Այսօր բուժ-հիմնարկում աշխատում են 30 բժիշկներ և բուժանձնակազմ:

6. Համայնքում է գտնվում «Ապարանի Արագած» ՓԲԸ արհեստական ալմաստների արտադրության գործարանը, որը 2007 թվականից այլևս չի գործում:

7. Համայնքի տարածքում իր գրասենյակն է հիմնել «Ապարան էՑՇ» ՓԲԸ-ն, որը զբաղվում է ամբողջ հանրապետությունում բարձրավոլտ էլեկտրամատակարարման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներով:Ընկերությունում աշխատում են 40-ից ավելի բանվորներ և մասնագետներ:

8. Համայնքում գործում են առևտուր իրականացնող 6 և սպասարկում իրականացնող 10-ից ավելի ընկերություններ ու կազմակերպություններ: Սպասարկում իրականացնող կազմակերպություններից են՝ «Աշտարակ-կաթ» ընկերության կաթի մթերման, համայնքի կենցաղ-սպասարկման, էլեկտրատեխնիկական սարքավորումների վերանորոգման, ինտերնետ կապի սպասարկման, ավտոտեխսպասարկման, բենզալցման, սննդի սպասարկման կետերը, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրամասը: Գործում է 2 վարսավիրանոց, ինտերնետ համակարգչային կենտրոն և սպորտային մարզասարքերով սենյակ: Համայնքում գործում են նաև հանդիսությունների սրահներ, հացի արտադրամաս, մանկական և սպորտային խաղահրապարակներ:

Այս ոլորտներում աշխատողների ընդհանուր թիվը հասնում է մոտ 60 մարդու:

9. Համայնքի սպասարկման առանձնահատկություններից առավել հատկանշական է աղբահանությունը, ինչպես նաև խմելու և ոռոգման ջրերի բավարար սպասարկումը:

Տնտեսություն

Արագած համայնքը, նախկինում լինելով արդյունաբերական խոշոր կենտրոն, և այսօր լինելով սակավահող համայնք, այնուամենայնիվ համարվում է տարածաշրջանի առավել զարգացած գյուղատնտեսական համայնքներից մեկը: Բնակչությունը զբաղվում է ինչպես հողագործությամբ, այնպես էլ անասնապահությամբ:

Հողագործության ոլորտում զբաղվում են հիմնականում կարտոֆիլի, կաղամբի և հացահատիկի մշակությամբ, իսկ անասնապահության ոլորտում լավ զարգացած է ինչպես խոշոր եղջերավոր անասունների, այնպես էլ խոզաբուծության ճյուղերը : Այսօր արդեն համայնքում գրանցված են շուրջ 10 ֆերմերային տնտեսություններ:

Մշակույթ և սպորտ

Արագած համայնքը ակտիվ է մշակութային ծրագրերի իրականացման առումով: Համայնքի մշակույթի տանը կազմակերպվել են երաժշտական մրցույթ-փառատոններ, ուրախների և հնարամիտների մրցույթներ և մշակութային այլ միջոցառումներ՝ ընդգրկելով տարածաշրջանի մի շարք համայնքների բնակիչների: Մշակույթի տունը ամբողջությամբ վերանորոգված և մասամբ կահավորված է: Համայնքի մշակութային կյանքը էլ ավելի է ակտիվացել հատկապես արվեստի դպրոցը բացելուց հետո, որտեղ ձևավորվել են երգի, պարի և երաժշտական այլ խմբեր, որոնք բացի համայնքային մի շարք միջոցառումներից մասցնակցում են նաև հանրապետական միջոցառումների և արժանացել են մի շարք խրախուսանքների և պատվոգրերի:

Շատ ակտիվ է սպորտային կյանքը: Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվում և անցկացվում են վոլեյբոլի, ֆուտբոլի, նարդու, շախմատի, դահուկի, թենիսի և այլ մարզաձևերի մրցույթներ, որին մասնակցում են տարածաշրջանի համայնքները: Գյուղում գործում են կարատեի, ֆուտբոլի, շախմատի, վոլեյբոլի խմբակներ: Կարատե մարզաձևում համայնքը տվել է հանրապետության չեմպիոններ: Իսկ Արագածի վոլեյբոլի մեծահասակների թիմը եղել է հանրապետության փոխգավաթակիրը և հաճախակի դարձել է տարբեր մրցաշարերի հաղթող: Համայնքը 2009թ ճանաչվել է հանրապետության լավագույն մարզական գյուղական համայնք և ստացել է հատուկ մրցանակ:

Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ապարանի տարածաշրջանի Արագած համայնքը գտնվում է Արագած լեռան ստորոտին, ծովի մակերևույթից 2000 մետր բարձրության վրա, ՀՀ Արագածոտն մարզի վարչական տարածքում: Գյուղը հիմնադրվել է 1828-30թթ. Արևմտյան Հայաստանի Մուշ, Տարոն և Ալաշկերտ գավառներից գաղթած հայ ընտանիքների վերաբնակեցմամբ: Հիմնադրման պահին գյուղը կոչվել է Ջամուշլու: Այնուհետև 1840թ-ից բնակավայրը անվանվել է Ղազանաֆար: Իսկ 1948թ. սեպտեմբերի 10-ից գյուղը վերանվանվել է Արագած:

Գյուղը տարածված է Արագածի լանջերից սկիզբ առնող Գեղարոտ գետի երկու ափերին: Նախկին շրջկենտրոն Ապարան քաղաքից գտնվում է 15կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 25կմ և Երևանից՝ 40կմ հեռավորության վրա:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5646.59 հա, որից

ա) բնակավայրի և տնամերձ հողամասերի տարածքը կազմում է 373.16 հա,

բ) վարելահողերը՝ 373.22 հա,

գ) խոտհարքերը՝ 94.34 հա,

դ) Արոտները 3262.02 հա:

Համայնքում հաշվարկված է 935 ծուխ, որից 880-ը օգտվել է հողի սեփականաշնորհումից: Սեփականաշնորհման մեկ հողաբաժինը կազմում է 0.53 հա: Գյուղը զբաղվում է ինչպես հողագործությամբ, այնպես էլ անասնապահությամբ: Հողագործության հիմնական ուղղություններն են կարտոֆիլի, կաղամբի և հացահատիկի մշակությունները իսկ անասնապահության մեջ՝ խոշոր եղջերավոր անասունների պահպանումն ու խնամքը:

Տարածքին և գյուղին բնորոշ է խստաշունչ ձմեռներով և զով ամառներով կլիմայական պայմանները: Վեգետացիոն շրջանի տևողությունը 170-185 օր է: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -20^{0}C - 25^{0}C-ի իսկ առավելագույնը՝ +27^{0}C - +35^{0}C-ի: Ձյան շերտի բարձրությունը հասնում է մինչև 120-170սմ: Առաջին ձյունը տեղում է հոկտեմբերի II տանսօրյակից իսկ շերտը պահպանվում է մինչև մայիսի I տասնօրյակը:

Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3819 մարդ, որից

	արական սեռի, մարդ	իգական սեռի, մարդ
մինչև 6 տարեկան	131	95
6-14 տարեկան	226	148
14-25 տարեկան	307	258
25-50 տարեկան	600	536
50 և ավելի տարեկան	743	775
Ընդամենը	2007	1812

Բնակչության տարեկան միջին աճը կազմում է 30 մարդ/տարի:

Բարձրագույն կրթությամբ բնակչության թիվը կազմում է 445 մարդ,

հետբուհական (ասպիրանտական) կրթությամբ՝ 15 մարդ:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

1996թ. ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Արագած համայնքում ընտրությունների միջոցով ձևավորվել են առաջին տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի: 1996թ Անցած 15 տարիների ընթացքում ՏԻՄ-երի խնդիրների կայացմանը զուգընթաց կայացել է նաև մեր համայնքի ՏԻՄ-երը և այսօր Արագած համայնքում կա ակտիվ և հմուտ գործող ՏԻՄ, որոնց գործունեության արդյունքում համայնքում իրականացվել և իրականացվում են ներքոհիշյալ մի շարք ծրագրերը՝

1. Ներհամայնքային ոռոգման ջրագծերի մաքրում և հիմնանորոգում
2. Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում
3. Արվեստի դպրոցում նոր խմբերի ավելացում
4. Համայնքային և դաշտամիջյան ճանապարհների և կամուրջների մշտական վերանորոգում
5. Անտառածածկույթի համալրում
6. Համայնքի գազաֆիկացման աշխատանքների ընդլայնում

7. Համայնքի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում

8. Հակակարկտային կայանների հիմնում թվով 4 հատ

Այս աշխատանքները համայնքապետարանը իրականացրել և իրականացնում է ավագանու համապատասխան որոշումներով:

Ամենամյա աշխատանքներից են՝

- Մշտական աջակցությունը համայնքի գյուղատնտեսական աշխատանքներին / բնակչությանը մատչելի գներով պարարտանյութերի , սերմանյութերի և դիզվառելիքի ապահովում /
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների ու կամուրջների մշտական վերանորոգումներ, ճանապարհների ձմեռային սպասարկում և մաքրում
- Ներհամայնքային և միջհամայնքային մշակութային ու սպորտային միջոցառումների անցկացում / ֆուտբոլ, վոլեյբոլ, նարդի, տամա, «Արագածյան ձմեռ», Ամանորյա միջոցառում, ուսանողական հավաք, զինակոչի ողջերթի արարողություն, ուսուցչի օր, առաջին և վերջին զանգերի, մանրամասները՝ www.aragac.am կայքում/
- Աղբահանության կազմակերպում
- Խմելու ջրագծերի սպասարկում
- «Մուշ» միջհամայնքային միավորման կառավարման իրականացում /Արագած-Արայի-Ափնա-Ծաղկաշեն-/ գույքահարկի և հողի հարկի բազայի վարում
- Անապահով ընտանիքներին սոցիալական օգնության տրամադրում
- Հեղեղատարների մաքրում, հակահեղեղային աշխատանքների կատարում
- Դպրոցների համակողմանի աջակցություն

Առաջիկա ծրագրեր

1. **համայնքի գազաֆիկացման աշխատանքների ընդլայնում**
2. **Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում**
3. **Մարզադպրոցի կառուցում**
4. **Մանկապարտեզի և Արվեստի դպրոցի նոր շենքի կառուցում**
5. **Արագած առողջության կենտրոնի հիմնանորոգում**
6. **Հեղեղատարների մաքրման և կառուցման աշխատանքների շարունակում**

7. Խմելու ջրի վերակառուցվող համակարգի ցանցի ավարտում
8. Ոռոգման ջրատարների վերանորոգում
9. Արոտավայրերի բարելավման աշխատանքների իրականացում
10. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում
11. Նոր աշխատատեղերի ստեղծում
12. Տուրիզմի և զբոսաշրջության պայմանների ստեղծում
13. Անտառատնկման աշխատանքների շարունակում
14. համայնքի գլխավոր հատակագծի կազմում
15. Մանկական խաղահրապարակի հիմնում
16. Լեռնային մորու տնկիների ընդլայնում
17. Փորձնական պտղատու այգու հիմնում (3 հա)
18. Լեռնագնացության զարգացում
19. Հեծանվային արշավ
20. Դահուկասահք
21. Արևային վահանակների տեղադրում
22. Էկոհյուրատների հիմնում

Այս աշխատանքները համայնքապետարանը իրականացրել և իրականացնում է ավագանու համապատասխան որոշումներով:

Հավելված 1

Համայնքի հիմնական ցուցանիշների գնահատում և կանխատեսում

Հ/հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2016 փաստ	2017 փաստ	2018 փաստ	2019 փաստ	2020 փաստ	2021 փաստ
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Համայնքի վարչական տարածք	հա	56481	56481	56481	56481	56481	56481
2.	Բնակչության թիվը, այդ թվում	մարդ	3675	3713	3726	3742	3761	3803

	Կանայք	մարդ	1738	1761	1764	1766	1772	1796
	Տղամարդիկ	մարդ	1937	1952	1962	1976	1989	2007
3.	Բնակելի առանձնատների թիվը	տուն	728	733	736	749	751	761
4.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	221	221	236	241	248	251
	Այդ թվում բնակչությունից	տոննա	110	114	116	121	124	124
5.	Սանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենամեխանիզմների քանակը	միավոր	1	1	2	2	3	3
6	Սանիտարական մաքրման տարածքը	հա	100	100	102	103	104	105
7.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	117	117	117	118	119	125
8.	Ոռոգելի հողերի մակերեսը	հա	410	415	421	432	435	440
9.	Խմելու ջրամատակարարման ներհամայնքային համակարգի երկարությունը	կմ	53	53	54	55	56	57
10	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	36	36	37	37.5	38.5	40.5
11.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների մակերեսը	քմ	40000	40000	41000	41000	41000	43000
12.	Խոշոր եղջերավոր անասունների քանակը այդ թվում՝	գլուխ	1690	1720	1750	1865	1920	1940
	Կովերի	գլուխ	850	867	875	900	930	970
13.	Մանր եղջրավոր անասունների քանակը, այդ թվում	գլուխ	80	-	-	-	-	-
	ոչխարների	գլուխ	80	-	-	-	-	-
14.	Առևտրի և ծառայությունների օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	7	9	15	15	17	25
	Առևտրի օբյեկտներ	հատ	6	8	14	14	16	19
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	1	1	1	1	1	1
15	Համայնքի սեփականություն համարվող հողերի մակերեսը	հա	1446.8	1446.8	1446.8	1446.8	1446.8	1446.8
16.	Վարձակալությամբ տրամադրված	հա	30	30	30	30	34	36

	հողերի մակերեսը							
17	Վարձակալությամբ տրամադրված հողերի օգտագործման մակարդակը	%	90	90	90	90	90	90
18	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ	301	302	315	326	333	340
19	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	Զբաղեցրած հողատարածքը	Հազ.քմ	969.24	969.24	969.24	969.24	969.24	969.24
	Շենքի տարածքը	քմ	600	600	600	600	600	600
	Երեխաների թիվը	մարդ	107	110	115	122	130	145
	Խմբերի թիվը	խումբ	4	4	4	4	5	5
	Աշխատողների թիվը	մարդ	13	13	13	13	16	19
20	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	2	2	2	2	2	2
	Աշակերտների թիվը	մարդ	374	376	380	381	390	400
	Աշխատողների թիվը	մարդ	71	71	71	71	71	71
	Մանկավարժների թիվը	մարդ	53	53	53	53	53	53
	Դասարանների թիվը	դաս	34	34	34	34	34	34
21	Մշակութային Հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	Արվեստի դպրոց	հատ	1	1	1	1	1	
	Երեխաների թիվը	մարդ	110	120	132	145	157	170
	Խմբերի թիվը	խումբ	8	8	10	12	13	14
22.	Առողջապահական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	Այցելուների թիվը	մարդ	2630	2630	2641	2647	2470	2750
	Աշխատողների թիվը	մարդ	28	28	28	28	28	28
23.	Սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	ընտ	270	276	272	260	255	250
24.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	412	412	414	425	436	439
25.	Հաշմանդամների թիվը	մարդ	125	125	125	125	125	125
26.	Ծնողազուրկ երեխաների թիվը	մարդ	64	64	64	64	64	64

27.	Աշխատունակների թիվը	մարդ	2150	2155	2162	2170	2178	2185
28.	Զբաղվածների թիվը	մարդ	1214	1214	1214	1214	1214	1214
30	Գործազուրկների թիվը	մարդ	1210	1210	1210	1210	1210	1210
31.	Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը	ընտ	88	88	88	88	88	88
32.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ	72	72	72	72	72	72
33.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	Հազ. դր	35.0	35.0	40.0	42.0	47.0	50.0

2.1.2 Համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակ

Հ/Հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման (վերականգնման) կարիք
1	Համայնքապետարանի շենք	Արագածյան 1-ին նրբ 5	1968	367.88 քմ	Ոչ բարվոք	Անհրաժեշտ է վերանորոգել
2	Նախակրթական ուսումնական հաստատություն	8-րդ փողոց 4	1943	969.24 քմ	Ոչ բարվոք	Փոխարինման կարիք
3	Արագածի արվեստի դպրոց	8-րդ փողոց 4	1943	450.28 քմ	Ոչ բարվոք	Փոխարինման կարիք
4	Մշակույթի տուն	Կոմիտասի 28	1973	1688.8 քմ	բարվոք	Նորմալ վիճակ

5	Խմելու ջրի ներհամայնքային ցանց	Գ. Արագած	1973	53000մ	Ոչ բարվոք	Փոխարինման կարիք (վերակառուցում)
6	Ոռոգման ջրի ներհամայնքային ցանց	Գ. Արագած	1971	11800մ	Ոչ բարվոք	Վերանորոգման կարիք
7	Մանկական զբոսայգի	8-րդ փողոց 4	2008	1000քմ	Ոչ բարվոք	Վերանորոգման կարիք
8	Ներհամայնքային ճանապարհներ	Գ. Արագած	1968	36000մ	Ոչ բարվոք	Վերանորոգման կարիք
9	Արտաքին լուսավորության ցանց	Գ. Արագած	2008	7000գծմ	բարվոք	Ընդլայնման կարիք

2.1.3Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի միջոցառումներ

Արագած համայնքում 2017-2021 թթ ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Արագած համայնքը ակտիվ համագործակցում է նաև Word wision Armenia, Յուքոմ Արմենիա, ՇԵՆ ԲՀԿ, ՆԻԳ Ապարան ԲՀԿ, Հայաստան ծառատունկ, Եվրասիա ԲՀԿ, Կանաչ արահետ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ: Վերոհիշյալ ժամանակահատվածում մասնակի ծրագրերը իրականացվելու են նաև միջհամայնքային համագործակցության շնորհիվ:

2.1.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են բացառապես համայնքային բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին չի ակնկալվում կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Համայնքային բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի և տուրքերի և մեծամասամբ ֆինանսական դոտացիաների հաշվին:

Սեփական եկամուտները 2016թ-ին կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 22%-ը իսկ ֆինանսական դոտացիաները 78%: Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք գրեթե չեն աճում, այդ պատճառով թեև տեսակարեն պետք է հաջորդ տարիների եկամուտների կանխատեսման ժամանակ եկամուտների որոշակի աճ նախատեսվեր, սակայն սեփական եկամուտների մասով դա չի արվել իրատեսական լինելու նպատակով:

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2016թ փաստ	2017թ նախատ.	2018թ նախատ.	2019թ նախատ.	2020թ նախատ	2021 թ նախատ.
1	2	3	4	5	6	7	8
1	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ						
2	Ընդամենը եկամուտներ (1+2+3)*	89423.9	90325.4	94608.0	98250.0	100650.0	103450.0
3	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	15198.5	16100.0	16930.0	18150.0	19350.0	19950.0
4	Գույքային հարկեր անշարժ գույքից	6060.0	6380.0	6680.0	6900.0	7100.0	7200.0
5	Գույքահարկ շենքերի և	860.0	880.0	880.0	900.0	900.0	900.0

	շինությունների համար						
6	Հողի հարկ	5200.0	5500.0	5800.0	6000.0	6200.0	6300.0
7	Գույքային հարկեր այլ գույքից	9000.0	9500.0	10000.0	11000.0	12000.0	12500.0
8	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	9000.0	9500.0	10000.0	11000.0	12000.0	12500.0
9	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	138.5	220.0	250.0	250.	250.0	250.0
10	Տեղական տուրքեր	138.5	220.0	250.0	250.	250.0	250.0
11	Պաշտոնական դրամաշնորհներ	67047.4	67047.4	70000.0	72000.0	73000.0.	75000.0
12	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝						
13	Այլ եկամուտներ	7178.0	7178.0	7678.0	8100.0	8300.0	8500.0
14	Գույքի վարձակալությունից եկամուտներ	2678.0	2678.0	2878	3220.0	3420.0	3420.0
15	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	2000.0	2000.0	2200.0	2500.0	2700.0	2700.0
16	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	678.0	678.0	678.0	720.0	720.0	720.0
17	Այլ եկամուտներ	4500.0	4500.0	4500.0	4880.0	4880.0	5080.0
18	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	4500.0	4500.0	4500.0	4880.0	4880.0	5080.0
19	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3)						
20	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						

2..1.5 Համայնքի սոցիալ – տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

Համայնքի սոցիալ – տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոններն են՝

- Աշխատատեղերի սակավությունը
- Բնակլիմայական խիստ պայմանները
- Արտագաղթը
- Ճանապարհների և ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը
- Գյուղ մթերքների իրացման դժվարությունները
- Վերամշակող ձեռնարկությունների բացակայությունը
- Ինտենսիվ անասնապահության բացակայությունը

2.1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի,հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

Արագած համայնքի ուժեղ կողմերն են

- մարդկային և աշխատանքային մեծ ռեսուրսների առկայությունը,
- կոմունիկացիոն ենթակառույցների առկայությունը,
- սոցիալական ենթակառույցների առկայությունը,
- արտադրական ձեռնարկությունների առկայությունը,
- ոռոգման և խմելու ջրի բավարար քանակությունը,

- գյուղատնտեսական տեխնիկաների առկայությունը,
- տրանսպորտային մշտական կապը,
- արոտավայրերի շատ և բարենպաստ պայմանները,
- հասարակական և առևտրային օբյեկտների առկայությունը,
- Արագած լեռան հետ համայնքի կապի մատչելիությունը,

- ակտիվ գործող տեղական ինքնակառավարման մարմինները,
- ուսանած և ուսանող ազգաբնակչության մեծ քանակը:
- **Հեռախոսակապի առկայություն**
- **Նախադպրոցական հաստատության առկայությունը**
- **Համայնքի գազաֆիկացման առկայությունը**
- **Հակակարկտային կայանքների առկայությունը**

Արագած համայնքի թույլ կողմերն են.

- հողային ռեսուրսի սակավությունը,
- գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը,
- դժվարին կլիմայական պայմանները,
- արտադրված գյուղ.մթերքների իրացման դժվարությունը,

- աշխատատեղերի սակավությունը,
- **Արտագաղթը**
- **Ճանապարհների վատ վիճակը**

2.2 Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր որոնք ամփոփ կերպով ներկայացվում են ստորև

- Համայնքի կանաչապատ տարածքների ավելացում
- Զբոսայգու կառուցում և բարեկարգում
- Սպորտ դպրոցի կառուցում
- Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- Համայնքում բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ:
- Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- Համայնքապետարանի շենքային և գույքային անբավարար պայմաններ
- Նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայությունների մատուցման համար անբավարար շենքային և գույքային պայմաններ
- Ոռոգման ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ
- Ներհամայնքային գիշերային արտաքին լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն

2.2.1 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում

Արագած համայնքի տեսլականը սահմանվել է հետևյալ կերպ.

Արագածը դարձնել նախ հմուտ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող, մրցունակ գյուղատնտեսական արտադրանք և արտադրության զարգացման որոշակի ուղիներ ունեցող, տուրիզմի, ալպինիզմի և լեռնադահուկային սպորտի համար անհրաժեշտ պայմաններ, բիզնեսի և ներդրումների համար գրավիչ և զարգացած գործարար միջավայր ունեցող համայնք, որի բնակիչներն ապահովված կլինեն աշխատանքով, կապրեն բարեկեցիկ և արժանավայել կյանքով:

2.2.2Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում

Ռազմավարական նպատակ 1.

Զարգացնել գյուղատնտեսությունը

Ռազմավարական խնդիր 1.1.

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ինֆրակառուցվածքների զարգացում

Միջոցառումներ

- Ոռոգման համակարգի զարգացում
- Հակակարկտային համակարգի ընդլայնում
- Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում
- Արոտավայրերի բարելավում
- Արոտավայրերի ջրարբիացում

Ռազմավարական խնդիր 1.2.

Գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ ծառայությունների ստեղծում

Միջոցառումներ

- Գյուղատնտեսության վարկավորման համակարգի բարելավվում
- Ապահովագրական համակարգի առկայություն
- Մեքենա-տրակտորային պարկի ավելացում գյուղատնտեսական տեխնիկայով. (համայնքային և միջհամայնքային ճանապարհների սպասարկում և ձմեռային պահպանության, ինչպես նաև համայնքների բնակիչներին գյուղատնտեսական աջակցության ցուցաբերում
- Տեղեկատվական համակարգի հիմնում
- Համայնքի ֆերմերների միության ստեղծում

Ռազմավարական խնդիր 1.3.

Գյուղանտեսության շահութաբերության բարձրացում

Միջոցառումներ

- Կիրառել գյուղատնտեսության վարման ինտենսիվ մեթոդներ
- Ֆերմերներին խորհրդատվությունների տրամադրում
- Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում
- Էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքի արտադրություն
- Լեռնային մորու տնկիների ավելացում
- Լեռնային մորու վերամշակման արտադրամասի հիմնում

Ռազմավարական նպատակ 2.

Զարգացնել ոչ-գյուղատնտեսական գործունեությունը

Ռազմավարական խնդիր 2.1.

Փոքր և միջին բիզնեսի աջակցություն

Միջոցառումներ

- Նոր բիզնեսի հիմնման ու վարման դասընթացների կազմակերպում
- Փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման գործիքների ստեղծում

- Աջակցություն համայնքում վերամշակման արտադրության հիմնմանը
- Հարկային օրենսդրության և վարկավորման դասընթացների կազմակերպում
- Սպասարկող և տեխնիկական անձնակազմի շարունակական ուսուցում
- Շուկայի ուսումնասիրում

Ռազմավարական խնդիր 2.2.

Բիզնեսի զարգացման բարենպաստ պայմանների ստեղծում

Միջոցառումներ

- Ներհամայնքային գազամատակարարման ցանցի ընդլայնում
- ջրահեռացման համակարգի կատարելագործում
- Համայնքի վերաբերյալ տեղեկատվության տարածման հնարավորությունների բարելավում
- ինտերնետ կապի համակարգի բարելավում

Ռազմավարական խնդիր 2.3.

Տուրիզմի զարգացում

Միջոցառումներ

- Զարգացնել տուրիզմի կազմակերպման ինֆրակառուցվածքներ
- Զարգացնել տուրիզմի աջակցության ծառայություններ
- Կազմակերպել խորհրդատվություն և ուսուցման դասընթացներ
- Համայնքի ինտերնետային էջում տեղադրել տուրիզմի համար գրավիչ նյութեր
- Էկոհյուրատներ
- Լեռնադահուկային սպորտ

Ռազմավարական նպատակ 3.

Բարձրացնել համայնքի բնակչության կյանքի որակը և տեղեկացվածության աստիճանը

Ռազմավարական խնդիր 3.1.

Համապատասխան ֆիզիկական ինֆրակառուցվածքների ստեղծում և պահպանում

Միջոցառումներ

- Ներհամայնքային գազամատակարարման ցանցի ընդլայնում
- ջրահեռացման համակարգի կատարելագործում
- Համայնքի գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում
- Մշակութային կյանքի զարգացում
- Այլ ընտրանքային էներգիայի աղբյուրների խթանում
- Սպասարկման ծառայությունների ավելացում և բարելավում
- Համայնքի տարածքում գտնվող կամուրջների վերանորոգում
- Գետի հունի մաքրում
- Հակահեղեղային համակարգի վերանորոգում

Ռազմավարական խնդիր 3.2.

Բարձրացնել բնակչության առողջապահական և կրթական ծառայությունների որակը

Միջոցառումներ

- Ընդլայնել բնակչությանը տրամադրվող առողջապահական ծառայությունների ցանկը
- Հարստացնել գրադարայնային ֆոնդը

Ռազմավարական խնդիր 3.3.

Բարելավել բնակչության հանգստի, սպորտի և ժամանցի պայմանները

Միջոցառումներ

- Համայնքի հանգստի գոտիների ավելացում
- Մարզադահլիճի կառուցում
- Շարունակել համայնքի անտառապատ տարածքների ավելացման աշխատանքները

Ռազմավարական նպատակ 4.

Զարգացնել Տեղական Ինքնակառավարման մարմինների կառավարման արդյունավետությունը

Ռազմավարական խնդիր 4.1.

Տեղական Ինքնակառավարման մարմինների ունակությունների զարգացում

Միջոցառումներ

- Համայնքապետարանի աշխատակազմի ուսուցում
- Համայնքի ավագանու ուսուցում տեղական ինքնակառավարման հարցերով
- Անդամակցություն համապատասխան հասարակական կազմակերպությունների
- Ակտիվ մասնակցություն տարածաշրջանում հինված միջհամայնքային միավորումների գործունեությանը

Ռազմավարական խնդիր 4.2.

Տեղական Ինքնակառավարման իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների բարելավում

Միջոցառումներ

- Համայնքապետարանի շենքային պայմանների բարելավում
- Համայնքապետարանի կահավորում

Ծրագրով նախատեսված է իրականացնել

N	Ծրագրի անվանումը	Արժեքը մլն. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆիանսական չափը	Տևողությունը
5	Թիվ 2 միջնակարգ դպրոցի հատակի վերանորոգում, մարզադահլիճի կառուցում	200	Պետբյուջե Համայնք	180.0 20.0	2017-2019

6	Թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգման ավարտում,	300.0	Պետբյուջե Համայնք	95.0 5.0	2017-2018
7	Արագած «Առողջության կենտրոնի» կտուրի փոխարինում, ջեռուցման անցկացում և վերանորոգում	80.0	Համաշխարհային առողջապահական ծրագիր, համայնք	30.0	2017-2019
9	Համայնքային նշանակության երեք կամուրջների և հեղեղատարների կառուցում	20.0	Պետբյուջե Համայնք	10.0 10.0	2017-2019
10	Համայնքի պատմության թանգարանի հիմնադրում	5.0	Միջազգային կազմակերպություն Համայնք	4.0 1.0	2020
11	Ոռոգման ներքին ցանցի վերանորոգման շարունակություն	60	միջազգային կազ. Համայնք	54 6	2018-2019
12	Խմելու ջրի ջրամատակարարման վերակառուցվող ցանցի շինարարության ավարտ	1.2 մլրդ	Միջազգային կազմակերպություն Համայնք	50.0 10.0	2017
14	Համայնքի էլեկտրականության մատակարարման բարելավում	30.0	Սպասարկող կազմակերպություն	30.0	2017-2018
16	Արոտավայրերի բարելավման աշխատանքների իրագործում	10.0	Միջազգային կազմակերպություն Համայնք	7.0 3.0	2017-2021
17	Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում	5.0	Համայնք	5.0	2017-2021
18	Տուրիզմի և զբոսաշրջության	20.0	Գործարարներ	20.0	2017-2021

	պայմանների զարգացում				
19	Անտառաստեղծման աշխատանքների շարունակություն	10.0	«Հայաստան Ծառատունկ» Համայնք	8.0 2.0	2017-2021
20	Համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում և կահավորում	20.0	Համայնքապետարան	20.0	2017-2018
21	Համայնքի գլխավոր հատակագծի կազմում	8.0	ՀՀ ԿԱ ԱԳ ԿՊԿ	8.0	2017
22	Լեռնային մորու տնկիների ավելացում	5.0	Համայնք	5.0	2017
23	Լեռնային մորու վերամշակման արտադրամասի հիմնում	40.0	Գործարարներ	40.0	2017-2018
24	Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում	50.0	Գործարարներ	50.0	2017-2018
25	Մանկական զբոսայգու հիմնում	10.0	Համայնք	10.0	2018
26	Արևային վահանակների տեղադրում	23.8	Համայնք Ներդրող	4.7 18.1	2018-2021
27	Հակակարկտային կայանների ընդլայնում	12	Համայնք մարզպետարան	6 6	2017-2021

2.2.3 ՀՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրությունը

Արագած համայնքի տեսլականը սահմանվել է հետևյալ կերպ.

Արագածը դարձնել նախ հմուտ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող, մրցունակ գյուղատնտեսական արտադրանք և արտադրության զարգացման որոշակի ուղիներ ունեցող, տուրիզմի, ալպինիզմի և լեռնադահուկային սպորտի համար անհրաժեշտ պայմաններ, բիզնեսի և ներդրումների համար գրավիչ և զարգացած գործարար միջավայր ունեցող համայնք, որի բնակիչներն ապահովված կլինեն աշխատանքով, կապրեն բարեկեցիկ և արժանավայել կյանքով:

Այս ռազմավարության ընտրության համար հիմք են հանդիսանում հետևյալ նախադրյալները և զարգացմանը նպաստող դրական միտումները.

- տեղական ինքնակառավարման որոշակի փորձի և բավարար օրենսդրական դաշտի առկայություն
- անհրաժեշտ որակյալ մարդկային ռեսուրսների առկայություն
- գյուղատնտեսության վարման բարենպաստ պայմաններ
- գործարարության զարգացման բավարար պայմաններ
- ենթակառուցվածքների առկայություն
- զբոսաշրջության և հանգստի առանձին ձևերի զարգացման բարենպաստ պայմաններ
- հյուրանոցի առկայություն

Որպես ռազմավարական նպատակներ առանձնացվել են հետևյալ նպատակները և դրանց իրականացման համար լուծման ենթակա խնդիրները և իրականացվելիք միջոցառումները:

2.1 ՀՀԶԾ ֆինանսավորումը

ՀՀԶԾ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրները համայնքապետարանը տեսնում է մասնավոր ներդրողների, միջազգային և բարեգործական կազմակերպությունների, բարերարների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության և մարզպետարանի հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Բացի այդ

որոշակի ծրագրերի իրականացման ժամանակ կօգտագործվի նաև համայնքի սեփական եկամուտները:

2.4 ՀՀԶԾ մոնիթորինգը

ՀՀԶԾ-ի իրականացման ամբողջ ժամանակաշրջանում պետք է վերահսկողություն սահմանվի ինչպես համայնքի աշխատանքային խմբի, համայնքապետարանի, այնպես էլ միջազգային, բարեգործական, ու հասարակական կազմակերպությունների կողմից:

3 ՀՀԶԾ իրազեկում

ՀՀԶԾ իրազեկումը կատարվելու է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների, համայնքի ավագանու, աշխատակազմի, համայնքի ընդհանուր ժողովների միջոցով: Բացի այդ այն կտեղադրվի նաև Արագած համայնքի պաշտոնական կայք էջում:

4 ՀՀԶԾ իրականացումը

ՀՀԶԾ իրականացումը կատարվելու է համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ ու պատասխանատվությամբ: Դրա իրականացումը կազմակերպվում է՝ հենվելով համայնքի համապատասխան ստորաբաժանումների վրա:

5 ՀՀԶԾ գնահատումը

